ԶԱՆԳԵԶՈՒՐ

№ 16 (7180)

8 ԱՊՐԻԼԻ 1993 Թ.

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ

ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ø Ր Ը

ԳԻՆԸ՝ 8 ՌՈՒԲԼԻ

ԳՈՐԻՍԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ ® ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1934 ԹՎԱԿԱՆԻՑ

ՍԱՏԱՐ ԿԱՆԳՆԵՆՔ ՄԵՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԱՐԴԱՐ ՊԱՅՔԱՐԻՆ

Հայաստանի Գերագույն խորհրդի և կառավարության նախագահությունները ընդունել են դիմում ուղղված հայ ժողովրդին, որը ներկայացնում ենք ստորև· «Հայրենակիցներ: Հայաստանի Հանրապետությունը դժվարին փորձության առջև է: Հայ ժողովրդի դեմ իրականացվող անաբեկչությունը, որը սաստկանում է հատկապես ղարաբաղյան ռազմաբեմում, ինքնապաշտպանական ուժերի հաջողություններին զուգընթաց նորանոր դրսևորումներ է ստանում, ընդունելով հանրապետության հաղորդակցության բոլոր ուղիների նկատմամբ բացահայտ պատերազմի տեսք: Հայաստանը լիակատար շրջափակման մեջ է: Հերթական անգամ Վրաստանի տարածքում պայթվեց հանրապետությունը սնուցող գազատարը: Չի գործում երկաթուղին: Թուրքիան արգելել է իր ցամաքային և օդային տարածքներով որևէ փոխադրում: Ադրբեջանը համառորեն ձգտում է ռազմական կոնֆլիկտի մեջ ներքաշել Հայաստանը: Մեծագույն ջանքերի շնորհիվ վերջերս նկատվում էր տնտեսական կյանքի աշխուժացում, մարդիկ վերադարձել էին աշխատանքի, գործարանները սկսել էին արտադրանք տալ: Նկատելիորեն ավելացել էր ապրանքների արտահանումը: Այս հանգամանքին պայմաններում Հայաստանի իշխանությունները հավաստիացնում են, որ կանեն հնարավորը՝ ապահովելու կենսագործունեության օբյեկտների անխափան աշխատանքը, առկա ռեսուրսների համաչափ ու արդարացի բաշխումը, քաղաքական ու տնտեսական կայունությունը:

Սիրելի հայրենակիցներ, մենք ապրում ենք մեր հայրենիքի համար ամենանշանակալի պահերից մեկը, և մեր սերնդի պատմական առաքելությունն է միակամ և վճռական ամրապնդել հայոց պետականությունը, դիմակայել բոլոր դժվարությունները, շարունակել սատար կանգնել ԼՂ Հանրապետության մեր եղբայրների արդար պայքարին»:

Անցուդարձը Գորիսում

ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱԹՈՌԱՆԻՍՏԸ ԳՈՐԻՍՆ Է

«Սյունիք—Զանգեզուր» պետական ծրագրի գծով պետական նախարար Վազգեն Սարգսյանը ապրիլի 5—7-ը Գորիսում էր: Նրա նստավայրը գտնվում է պատգամավորների Գորիսի շրջխորհրդի վարչական շենքի երրորդ հարկում:

Նախօրյակին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ, պարոն Սարգսյանը հայտարարել է· թեև գոյություն ունեն աղետի գուտու, Սևանի ավազանի հիմնահարցերը, սակայն, «Սյունիք—Զանգեզուր» ծրագիրն իմ կարծիքով կարևորագույնն է, քանի որ Արցախը պահելու համար նրա թիկունքում մենք պետք է ունենանք հզոր Զանգեզուր: Պետական նախարարի կարգավիճակն ինձ հնարավորություն կտա, համագործակցելով Զանգեզուրի շրջանի իշխանությունների հետ, լուծել ծագող խնդիրները, որոնցից առաջինը պատերազմող շրջանին հատուկ կարգուկանոնի հաստատումն է:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանով Գորիսի շրջանի ՆԳ բաժնի պետ է նշանակվել միլիցիայի գնդապետ Աշոտ Սարգսյանի Ղահրամանյանը: Մինչ նոր նշանակումը նա Երևանի Արաբկիրի շրջանի ՆԳ բաժնի պետն էր:

ԾԱՆՐ ՄԱՐՏԵՐ

Շաբաթ օրը՝ ապրիլի 3—ին Կուբաթլիի վարչական տարածքից ադրբեջանական կազմավորումները հրետանային հուժկու կրակ են թափել Տեղ, Կոռնիձոր, Ներքին Խնձորեսկ, Խնձորեսկ գյուղերի վրա:

Հրետանային նախապատրաստությունից հետո նրանք միջանցքի հարավային մասում անցել են գրոհի: Մարտը տևել է 45 րոպե: Հակառակորդին հաջողվել է գրավել 3 դիրք: Սակայն հայ ինքնապաշտպանները ապրիլի 4-ի, լույս 5—ի գիշերը, անցնելով վը ճըռական գրոհի, հետ են վերցրել կորցրած դիրքերը:

ՆՇՎԵՑ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Գորիսի դրամատիկական թատրոնի դահլիճում գարնանային տրամադրություն էր: Նշվում էր մայրության և գեղեցկության տոնը:

Բացման խոսքով հանդես եկավ քաղխորհրդի նախագահ Ս. Հարությունյանը: Այնուհետև ողջույնի խոսք ասացին կանանց Գորիսի շրջխորհրդի նախագահ Բելլա Պարոնյանը, երկարամյա մանկավարժ Արմենուհի Յակոբյանը:

Միջոցառումը համեմվում էր երգով, պարով, ասմունքով:

ՆՎԻՐՎՈՒՄ Է

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ

ԳԱՐՈՒՆՔՎԵՔ…

Այսպիսի ծանր, այսպիսի մղձավանջային հեղձուկ, այս պիսի դիվոտ օրեր է՛լ երբ ենք ապրել, այսպես անկուշտ, այսպես սառցահար, այսպես անպաշտպան է՛լ երբ ենք եղել: Էլ երբ է կինն այսքան կոշտացել, էլ երբ է կինն այսքան իրեն ամփոփել պաշտպանական բունապդի պատանով ու արագիլի պես թևերը տարածել որդոց վրա, տարածել, որ չգա ու չտանի այն, ինչը երիցս իրենը չէ:

Եվ դիմահար եղած կանգուն մնաց, կանգուն մնաց ու իր ոգին ու ավիշը տապ դարձրեց. ու ջերմացրեց, իր նվաղուն մարմինը ներկայացրեց որպես հերոսացում ու ապրեցրեց, իբ ցրտից կոշտացած ձեռքերը մետաքս դարձրեց ու շոյեց: Կանգուն մնաց, ջերմացրեց, շոյեց… Ապրեցրեց, բայց մարումը ոչ ոքի որպես սպառում չներկայացրեց, լաց չեղավ:

Ապրեցեք: Ապրեցեք էլի, սիրելի կանայք, քանզի այդ միայն ձեր շնորհն է՝ վերինի կամոք…

Եվ ապրեց կինը, ապրեցրեց մինչև գարուն, իսկ գարունը եկավ՝ անկախ ամեն ինչից, եկավ, որ տաքացնի հույսը, որ այն ընձյուղվի ու նրբին սաղարթներով ծփա, ծփա՝ ի հեճուկս ժամանակի:

Գարնան թրթիռ ձեզ ու ծաղկում, գույներ ձեզ նրբին, հոգի ձեզ թրթռուն ու ժպիտ…

Գարունքվեք…

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՄԻՋԱՆՑՔ

Քելբաջարում արդախցիներն են

Մարտի 30—ից սկսած, ադրբեջանական կազմավորումները Քելբաջարից շարժվում էին Լաչինի միջանցքի ուղղությամբ և անընդհատ գնդակոծում ինչպես ճանապարհը, այնպես՝ էլ միջանցքի ամբողջ գոտին:

Այդ իսկ պատճառով Ղարաբաղի ինքնապաշտպանական ջոկատները հարկադրաբար գրոհի անցան: Հուժկու գրոհների շնորհիվ նրանց հաջողվեց փակել Քելբաջարից Լաչին տանող ճանապարհները՝ խափանելով նոր տեխնիկայի և զինուժի փոխադրումն այդ շրջան: Շրջապատվել է նաև լաչինյան մի մեծ խումբ:

Շարունակելով հակագրոհը, ղարաբաղցիները շաբաթ օրը գրավել են ռազմավարական նշանակություն ունեցող Քելբաջար ավանը:

ՍԱՀՄԱՆ

Հրթիռակոծվել է Գորիսը

Ապրիլի 7—ին, ժամը 11·30—ին Կուբաթլիի շրջանի վարչական տարածքից հրթիռակոծվել է Գորիս քաղաքը: Կան ավերածություններ: Վիրավորվել է 10 մարդ: Այս անգամ, բարեբախտաբար, զոհեր չկան:

Հայկական ինքնապաշտպանական ուժերը ուժգին հակահարվածով լքոեցրել են թշնամու կրակակետերը:

Այդ օրը հրթիռակոծվել են նաև շրջանի սահմանային գյուղերը:

Սեփական լրատվություն

ՄԵՐԺՎԵՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԱԽԱԳԻԾԸ

ՄԱԿ—ի Անվտանգության խորհուրդը երեքշաբթի օրը կայացած նիստում տագնապ արտահայտեց Լեռնային Ղարաբաղի շրջանում մարտերի սաստկացման առթիվ: ՄԱԿ—ի տարածած հայտարարության մեջ Անվտանգության խորհուրդը հայկական և ադրբեջանական կողմերից պահանջել է «անհապաղ դադարեցնել բոլոր մարտական գործողությունները, որոնք սպառնալիք են ներկայացնում շրջանի խաղաղության և անվտանգության համար, և զինվորական կազմավորումները դուրս բերել ռազմական գործողությունների հետևանքով օկուպացված շրջաններից»: Անվտանգության խորհուրդը մերժել է Թուրքիայի առաջարկած բանաձևի նախագիծը, որով պահանջվում է «դատապարտել Ադրբեջանի դեմ ուղղված Հայաստանի ագրեսիան»: Ագրեսոր չանվանելով հակամարտ կողմերից և ոչ մեկին, Անվտանգության խորհուրդը նրանց կոչ է արել անհապաղ դադարեցնել կրակը և ձեռնամուխ լինել հաշտության բանակցությունների:

Հայտարարության մեջ նշված է, որ անհրաժեշտ է, որպեսզի հայկական և ադրբեջանական կողմերը միջազգային մարդասիրական կազմակերպությունների համար հնարավորություն ապահովեն «թեթևացնելու կոնֆլիկտի գոտու շրջանների քաղաքացիական բնակչության տառապանքները»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ—ԻՏԱՐ—ՏԱՍՍ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս/թ· ապրիլի 7—ին, Գորիս քաղաքի հրթիռակոծության հետևանքով ծագած հրդեհները մարելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների ժամանակ, ներքին գործերի բաժնի աշխատակիցները նկատել են առանց պետհամարանիշի կանաչ գույնի 21011 մակնիշի «ժիգուլի» ավտոմեքենա, որը կոպիտ կերպով խախտում էր հասարակական կարգը, առաջ բերելով անհանգստություն քաղաքացիների արդարացի զայրույթը:

Միլիցիայի աշխատակիցները հետապնդել և փորձել են կանգնեցնել ավտոմեքենան, սակայն վարորդը դիմել է փախուստի: Այդ պահին անծանոթ վարորդը իր ձեռքին եղած «Նագան» տեսակի ատրճանակից կրակ է արձակել հետապնդող միլիցիայի աշխատակիցների վրա: Վերջիններս հարկադրված պատասխան կրակ են բացել, որի հետևանքով քաղաքացին ստացել է թեթև մարմնական վնասվածք: Հետագայում պարզվել է, որ վնասազերծված անձը հանդիսանում է Գորիս քաղաքի բնակիչ Ա. Մ.—ն:

Նա 1990 թվականից գտնվում է հետախուզման մեջ և մեղադրվում է ավազակության համար: Ա. Մ.—ն, բուժօգնություն ստանալուց հետո, կալանվել է: Իրեղեն ապացույց հանդիսացող «Նագանը» առգրավված է: Փաստի առթիվ Գորիսի միջշրջանային դատախազության կողմից կատարվում է հետաքննություն:

ԳՈՐԻՍԻ ՆԳ ԲԱԺԻՆ

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Անասունների առկա գլխաքանակը շրջանում 1993 թ. հունվարի մեկի դրությամբ, համեմատած 1990 թ. հունվարի մեկի հետ

Գյուղերը	Ա.ռ 1—ը հունվարի 1990 թ. եղել է					Ա.ռ 1—ը հունվարի 1993 թ. կա				
	խոշոր եղջ.	որից կովեր	խոզեր	ոչխար, այծ	ձիեր	խոշոր եղջ.	որից կովեր	խոզեր	ոչխար, այծ	ձիեր
Խոզնավար	816	317	—	1748	25	368	195	—	654	26
Վաղատուր	1016	330	3	2565	16	468	258	—	639	12
Խնածախ	1997	660	195	8773	70	959	515	—	1317	84
Արավուս	525	166	—	198	4	185	84	—	165	10
Տ ե ղ	2748	1117	259	7059	71	2057	1158	6	3042	99
Կոռնիձոր	1903	673	—	2618	26	525	352	—	182	25
Քարաշեն	967	360	261	2499	28	813	309	5	642	38
Խնձորեսկ	2998	1193	58	10805	71	2177	1467	—	1382	104
Ն. Խնձորեսկ	413	92	—	—	—	295	72	7	14	4
Հարթաշեն	1490	522	231	3731	20	1183	470	11	1445	56
Վերիշեն	1667	722	179	3228	36	1406	650	6	1872	14
Ակներ	1138	320	—	—	13	1228	553	3	463	38
Քարահունջ	1213	436	22	2222	6	616	372	—	1704	21
Խ ո տ	922	274	—	980	48	451	263	—	821	74
Որոտան	—	—	—	—	—	37	32	—	—	4
Շինուհայր	1069	434	76	4011	76	760	396	16	1452	144
Հալիձոր	1074	223	436	889	13	668	239	21	710	59
Հարժիս	1584	634	—	4441	20	824	481	—	2632	48
Տ ա թ և	1376	626	39	1940	33	1012	490	—	1018	36
Սվարանց	920	379	31	1324	29	451	281	—	423	34
Տանձատափ	—	—	—	—	—	198	93	—	124	4
Քաշունի	—	—	—	—	—	75	33	—	106	5
Բարձրավան	561	158	8	238	7	230	91	1	327	—
Շուռնուխ	139	46	33	33	5	21	21	—	—	—
Ք. Գորիս	1749	598	179	5204	13	1709	954	114	3153	19
Ընդ. շրջանում	28285	10289	2010	64475	630	18716	9829	194	24287	958
Տարբերությունը						—9569	—451	—1816	—40188	+328

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.— Այն գյուղերը, որոնք մինչև 1990 թ. հունվար ամիսը գյուղխորհուրդներ չեն ունենցել, դրանց բնակչության անասունների գլխաքանակը հաշվարկված է նախկին գյուղխորհուրդների վրա:

Ներկայացրեց Գորիսի ՇՎԲ—ի պետի տեղակալ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Մ Ե Ր Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Ընթերցողի ուշադրությանը ներկայացնելով այս ապյուսակը, ակնհայտ է դառնում, որ շրջանի անասնագլխաքանակը վերջին մի քանի տարվա ընթացքում կտրուկ վայրէջք է ապրում: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ընդամենը 3 տարվա ընթացքում պակասել է 9569, որից կովերինը՝ 451, ոչխարներինը՝ 40188, խոզերինը՝ 1816 գլխով: Այնպիսի գյուղեր, ինչպիսիք են Վաղատուրը, Խոզնավարը, Խնածախը, Արավուսը, Կոռնիձորը, Քարահունջը, Խոտը, Շինուհայրը, Սվարանցը, Բարձրավանը, Շուռնուխը և այլն, խոշորի գլխաքանակի կրճատման գծով առավել տխուր իրողության առջև են հայտնվել: Այդ ընթացքում կովերի գլխաքանակը Արավուսում պակասել է 2, Բարձրավանում՝ 1,8, Կոռնիձորում՝ 1,8 անգամ, Վաղատուրում՝ 72, Խոզնավարում՝ 122, Խնածախում՝ 145, Հարժիսում՝ 153 գլխով և այլն:

Եթե տարիներ առաջ շրջանը ողջ հանրապետությունում աչքի ընկնող հաջողություններ ուներ ոչխարաբուծության գծով, ներկայումս այդ եկամտաբեր ճյուղի գոյությունը հարցականի տակ է դրվել: Ոչխարների ընդհանուր գլխաքանակը 2,5—3,5 անգամ պակասել է գրեթե բոլոր գյուղերում, իսկ խոզաբուծությունն ընդհանրապես հայտնվել է լիկվիդացման փաստի առջև:

Հարց է առաջանում՝ ինչի՞ հետևանք է այս ամենը: Անշուշտ, առկա են որոշ օբյեկտիվ պատճառներ: 1990—1992 թվականների ընթացքում աղբբեջանական ելուզակները շարունակում էին տարբեր գյուղերից մեծ չափով խոշոր ու մանր եղջերավոր գողանալ: Լուրջ սայթաքումներ թույլ տվեցին անասունների սեփականաշնորհման ընթացքում: Գյուղացիական և գյուղացիական—կոլեկտիվ տնտեսությունները իրենց բաժին հասած անասունների մի զգալի մասը անհրաժեշտ վերահսկողության բացակայության պատճառով անարգել կերպով վաճառեցին կամ սպանդի ենթարկեցին: Այդ պրոցեսը շարունակվում է նաև ներկայումս: Եվ մի՞թե դա չի վկայում նաև այն տխուր փաստը, որ սեփականաշնորհված 16149 խոշոր եղջերավոր անասունից մընացել է ընդամենը 10564—ը, 5069 կովից՝ 4520—ը, 19975 ոչխարից՝ 11084—ը, 478 խոզից՝ և ոչ մեկը:

Ավելացնենք, որ գյուղական խորհուրդները, շրջանային գյուղվարչությունը, որքան էլ ցավալի է, անտեսել են անասունների արհեստական սերմնավորման գործի, որպես հոտի վերարտադրության գլխավոր պայմանի, պատշաճ մակարդակով կազմակերպումը, նախատեսվող բուժպրոֆիլակտիկ միջոցառումների իրականացումը: Օրենքի ուժով պատասխանատվության չենք կանչվում այն գյուղացիները, ովքեր սեփականաշնորհված անասուններն ինքնակամ մորթում կամ վաճառում են: Կարգ ու կանոնի, կարգապահության բացակայության պատճառով անասնագլխաքանակը կտրուկ իջել է նաև շրջանի պետտնտեսություններում:

Հաշվել ստեղծված ծանրագույն վիճակի հետ, նշանակում է 1—2 տարվա ընթացքում զրկվել նաև եղած անասնագլխաքանակից: Հարկավոր է բոլոր նպաստավոր պայմաններ ստեղծել առկա անասնագլխաքանակի ոչ միայն լրիվ պահպանման, այլև առաջիկա 2—3 տարվա ընթացքում դրա որոշակի ավելացման համար: Այդ ճարավորությունը շրջանն ունի: Գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ ու պետական տնտեսություններն ապահովված են ցանովի ու բնական խոտհարքներով, արոտավայրերով: Եվ եթե դրսևորենք է լուծվում կերի հարցը, ապա հիմնականում վերանում են առկա անասուններն անկորուստ պահպանելու հետ կապված բոլոր դժվարությունները: Դրա հետ մեկտեղ անշուշտ շատ կարևոր են անասունների արհեստական սերմնավորման կազմակերպումը, բուժպրոֆիլակտիկ միջոցառումների իրականացումը, որոնց ուղղությամբ առայժմ շարունակվում են նախկինից եկող բերությունները, բացթողումները: Փաստորեն այնպես է ստացվում, որ գյուղացին իր կովը սերմնավորելու կամ բուժելու համար հայտնվում է անասելի դժվարությունների առջև և հիասթափվում է ավելորդ գլխացավանքի մեջ ընկնում: Այդ հարցում գյուղական խորհուրդները, շրջանային գյուղվարչությունը, անասունների արհեստական սերմնավորման կայանը պարտավոր են մեկընդմիշտ պարզություն, որոշակիություն մտցնել:

Ինչպես երևում է աղյուսակից, կովերի գլխաքանակը որոշակիորեն ավելացել է Գորիս քաղաքում: Սակայն քաղաքաբնակ անասնատերերը ամառային արոտների և խոտհարքների հարցում մտահոգություն ունեն: Դա այն հարցն է, որ քաղաքային իշխանությունը պարտավոր է ըստ ամենայնի լուծել շրջխորհրդի գործկոմի հետ անհրաժեշտ համաձայնության գալու միջոցով:

Շրջանի բնակչության պահանջն անասնապահական մթերքներով կարելի է և պետք է անպայման լուծել ներքին հնարավորությունների ու միջոցների մինչև վերջ օգտագործման հաշվին: Դլխավոր նախապայմանը, կրկնում ենք, անասնագլխաքանակի անկորուստ պահպանումն է, դրա հետագա ավելացումը և, իհարկե, նաև մթերատվության տարեցտարի բարձրացումը, մթերումների հաջող կազմակերպումը:

Ն. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Գորիսի շրջանային ընտրական հանձնաժողովի որոշմամբ 1993 թվականի հունիսի 12—ին Վերիշենի թիվ 5 և Խնածախի թիվ 14 թաղամասերի ընտրատարածքներում նշանակվել են շրջխորհրդի պատգամավորների ընտրություններ:

Կից ներկայացվում է ընտրությունների անցկացման միջոցառումների օրացուցային պլանը:

1. Պատգամավորության թեկնածուների առաջադրում ըստ ընտրատարածքների (հոդված 30)— 1993 թ. ապրիլի 3—ից մինչև մայիսի 3—ը ներառյալ:

2. Ըստ ընտրատարածքների պատգամավորության թեկնածուների գրանցում (հոդված 31)— մայիսի 3—ից մինչև 13—ը:

3. Ըստ ընտրատարածքների առաջադրված պատգամավորության թեկնածուների գրանցման մասին հաղորդագրության հրապարակում մամուլում (հոդված 31)— մայիսի 18—ից ոչ ուշ:

4. Ընտրատարածքներում պատգամավորության թեկնածուների հետ ընտրողների հանդիպումների անցկացում (հոդված 38)— մայիսի 15—ից մինչև հունիսի 11—ը:

5. Ընտրողների ցուցակները համընդհանուր ծանոթացման ներկայացնելը (հոդված 28)—մայիսի 29—ից ոչ ուշ:

6. Ընտրատարածքներում քվեարկության ժամանակի ու տեղի մասին ընտրողներին տեղյակ պահելը (հոդված 42)— հունիսի 2—ից ոչ ուշ:

7. Քվեաթերթիկներով տեղամասային ընտրական հանձնաժողովներին ապահովելը (հոդված 20)— հունիսի 9—ից ոչ ուշ:

8. Քվեարկության անցկացումն ընտրատարածքներում—հունիսի 12-ին, տեղական ժամանակով ժամը 7—ից մինչև 20—ը:

9. Ընտրությունների արդյունքների մասին շրջանային ընտրական հանձնաժողովի հաղորդագրության հրապարակումը (հոդված 50)— հունիսի 17—ից ոչ ուշ:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱՄԱԿ

ՈՐՏԵՂԻ՞Ց ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՋՐԱՂԱՑՔԱՐԵՐ

Հարգելի խմբագրություն, ոչ հեռավոր անցյալում միայն մեր՝ Խնձորեսկ գյուղում գործել է 20—25 ջրաղաց: Ժամանակի ընթացքում դրանք բոլորն էլ քանդվել—ավերվել են, իսկ ջրաղացքարերը՝ կոտրատվել կամ օգտագործվել շինարարական նպատակների համար: Հիմա գյուղում կա ընդամենը մեկ էլեկտրաաղաց, որն էլ էլեկտրաէներգիայի պակասի պատճառով արտադրողաբար չի գործում, չի բավարարում բնակիչների պահանջները: Այդ առումով գյուղում ջրաղացներ ունենալը դարձել է անհրաժեշտություն: Սակայն միակ բանը, որ խանգարում է գործի իրականացմանը, ջրաղացքարերի ձեռք բերումն է: Ասում են, թե նախկինում դրանք ձեռք են բերել, տեղափոխել Լեռնային Ղարաբաղից, ինչը ներկայումս շատ հասկանալի պատճառով անկարելի է: Հետաքրքիր է՝ Հայաստանի որևէ շրջանում կամ բնակավայրում չկա՞ն այնպիսի քարատեսակներ, որոնցից հնարավոր լինի ջրաղացքարեր պատրաստել: Այդ հարցում ակնկալում ենք շրջանի համապատասխան կազմակերպությունների օգնությունը:

Եթե ջրաղացքարերի ձեռք բերումը դժվարությունների հետ կապված չլինի, համոզված եմ, որ ոչ միայն մեր, այլ շրջանի ուրիշ գյուղերում ևս զարկ կտրվի ջրաղացների շինարարությանը, և բնակիչներն իրենց հացահատիկն աղալու հարցում այլևս ավելորդ նեղությունների առջև չեն կանգնի:

ՀԱԿՈԲ ԲԵԳԼԱՐՅԱՆ
Խնձորեսկ գյուղի բնակիչ

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՀԱՐՑԵՐԸ ՁԻՐՄԱՆ ԵՆ



Ռուսաստանի Դաշնության՝ 1993—ի ապրիլի 25—ին կայանալիք հանրաքվեն չորս հարց է պարունակում.

1. Վստահո՞ւմ եք, արդյոք, ՌԴ նախագահ Բորիս Ելցինին:

2. Հավանություն տալի՞ս եք ՌԴ նախագահի և կառավարության սոցիալ—տնտեսական քաղաքականությանը՝ սկսած 1992 թ.—ից:

3. Անհրաժե՞շտ եք համարում ՌԴ նախագահի վաղաժամկետ ընտրությունների անցկացումը:

4. Անհրաժե՞շտ եք համարում ՌԴ ժողովրդական պատգամավորների վաղաժամկետ ընտրությունների անցկացումը:

Որոշումը կայացած է համարվելու, եթե նրա օգտին քվեարկեն քվեարկելու իրավունք ունեցող քաղաքացիների կեսից ավելին: ՌԴ կառավարությանն առաջարկված է դարձնել հանրաքվեների, այլ հասարակական հարցումների կազմակերպման հետ կապված ցանկացած գործունեություն և բոլոր ջանքերը կենտրոնացնել միայն սոցիալ—տնտեսական խնդիրների լուծման վրա:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ

(ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ԱՌԱՋ, ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՀԵՏՈ)

Հայաստանի բնակիչները պետք է հստակ գիտակցեն, որ ապրում են երկրաշարժավտանգ տարածաշրջանում, և ուժեղ երկրաշարժեր մեզ մոտ տեղի են ունեցել և դեռ տեղի կունենան:

Սակայն այդ փաստը չպետք է հուսահատության մատնի, քանի որ երկրաշարժերից կարելի է պաշտպանվել: Փորձը ցույց է տալիս, որ երկրաշարժերի ժամանակ զոհերի թիվը հնարավոր է զգալիորեն նվազեցնել, եթե մարդիկ գիտենան ինչպես նախապատրաստվել երկրաշարժերին, ինչ անել ցնցումների ժամանակ և դրանցից հետո:

Սույն հրահանգը մշակվել է ՀՀ կառավարությանն առընթեր Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության (ՍՊԱԾ) բնակչության հետ տարվող աշխատանքի կենտրոնում (ԲՏԱԿ) և նպատակ ունի բնակչությանը ծանոթացնել սեյսմապաշտպանության հիմնական վարքականոններին երկրաշարժերի ժամանակ սեյսմիկ վտանգը նվազեցնելու համար:

1. ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻՆ

1. Անհրաժեշտ է հաշվի առնել տեղանքի երկրաբանական պայմանները և շենքերը կառուցել ակտիվ խզվածքներից հեռու, որովհետև ավերածություններ առաջացնող շարժումները տեղի են ունենում հիմնականում այդ խզվածքների երկայնքով: Դրա համար անհրաժեշտ է ունենալ երկրաբանների և շինարարների պաշտոնական եզրակացությունը կառուցապատվող վայրի մասին:

2. Անհրաժեշտ է վերացնել շենքերում կատարած այն վերակառուցումները, որոնք նվազեցրել են շենքի սեյսմակայունությունը, հիմքը թուլացնող նկուղային հարկերի վերակառուցումները, բնակարանների հատակագծի փոփոխությունները (կրող պատերի մեջ որմնախոռոչները և այլն), տանիքներում ջրի բաքերի տեղադրումը:

3. Շենքերից մարդկանց էվակուացնելու ուղիներ և տուժածներին փրկելու հնարավորություն ապահովելու համար պետք է երկաթյա դռները փոխարինել փայտյա դռներով, որովհետև առաջին իսկ ցնցումների ժամանակ դրանք ծռվում, դժվարությամբ են բացվում և նույնիսկ խափանվում են: Առաջին հարկերի պատուհաններից պետք է հանել մետաղյա ճաղաշարերը, կամ ամրացնել պատուհանների շարժական փեղկերին: Ելքերն ու մուտքերը, աստիճանավանդակներն ու միջանցքները պետք է ազատել մեծածավալ առարկաներից:

4. Հիմնարկներում և գործարաններում կահույքը, հաստոցներն ու սարքերը պետք է ամրացված լինեն հատակին ու պատերին: Դյուրաբեկ սարքերն ու ծանր առարկաներն անհրաժեշտ է վերին դարակներից իջեցնել ստորինների վրա: Խտացված գազով լի բալոնը և ջրատաքացուցիչը պետք է ամրացված լինեն պատերին: Դյուրավառ և թունավոր հեղուկներով լի անոթները պետք է հուսալիորեն ամրացնել: Դարակների վրա դրված զեները կարելի է ավելի ապահով դարձնել. դարակների երկարությամբ մի եզրակող ամրացնելով: Ամրացրեք նաև սառնարանը, գրապահարանները և դարակները:

5. Մահճակալը տեղադրեք պատուհանից հեռու, կրող պատի մոտ: Չի կարելի մահճակալի վերևում կախել գրադարակներ, ծանր շրջանակներով նկարներ և այլն:

6. Որոշեք ձեր տան կամ աշխատավայրի ամենաանվտանգ տեղերը, ուր կարելի է սպասել մինչև ցնցումների ավարտը և ձեր ընտանիքի անդամներին ու աշխատակիցներին ծանոթացրեք դրանց հետ:

7. Նախօրոք որոշեք շենքից դուրս գալու ավելի անվտանգ ուղին: Պայմանավորվեք ձեր ընտանիքի անդամների հետ, թե որտեղ պետք է հանդիպեք, եթե երկրաշարժի ժամանակ գտնվեք քաղաքի տարբեր մասերում:

8. Հեռախոսի մոտ պատրաստ ունեցեք շտապ օգնության, հրշեջ խմբի, գազավթարային բրիգադի, միլիցիայի հեռախոսահամարները: Աչքի ընկնող տեղում ձեռքի տակ ունեցեք նաև առաջին օգնության դեղարկղիկ (դեղորայք, վիրակապական նյութեր), մարտկոցներով ռադիոընդունիչ, գրպանի լապտեր, խմելու պահեստային ջուր և պահածոներ այնքան քանակությամբ, որպեսզի բավականացնի մի քանի օր ապրելու (մեկ օրում մարդուն անհրաժեշտ է 3—4 լիտր ջուր՝ խմելու և սնունդ պատրաստելու համար), ձմռանը՝ տաք շորեր, որովհետև երկրաշարժը գիշերն սկսվելուն պես դուք ստիպված կլինեք անմիջապես դուրս գալ տնից: Տիրապետեք և ձեր ընտանիքի անդամներին ևս սովորեցրեք առաջին օգնություն ցուցաբերելու եղանակներին:

2. Ի՞ՆՉ ԱՆԵԼ ՑՆՑՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

9. Խուճապի մի մատնվեք, Ձեր հավասարակշռվածությունը վստահություն կներշնչի նաև շրջապատի մարդկանց: Խուճապային իրադրությանը մեջ անխոհեմ գործողությունները կարող են վատացնել ձեր վիճակը և վնաս պատճառել շրջապատին: Հուսահատ, աղեկտուր ճիչերը արագ են փոխանցվում ուրիշներին և ստեղծում համընդհանուր խուճապային մթնոլորտ:

10. Եթե դուք գտնվում եք բազմահարկ շենքի առաջին և երկրորդ հարկերում, աշխատեք արագ դուրս գալ այնտեղից՝ զգուշանալով փլուզվող շենքի բեկորներից:

11. Եթե գտնվում եք երրորդ և բարձր հարկերում, շենքից դուրս մի եկեք, աստիճաններն ու աստիճանահարթակները կարող են լցված լինել խուճապահար մարդկանցով, վերելակներն արդեն անջատված կլինեն, կամ կարող են անջատվել ցանկացած պահի: Բացի դրանից, աստիճանները ու աստիճանահարթակները հաճախ փլվում են առաջին իսկ ցնցումների ժամանակ: Ավելի խելամիտ կլինի ցնցումների ժամանակ մնալ այնտեղ, որտեղ գտնվում եք՝ տեղափոխվելով անվտանգ տեղ: Կանգնեք ներսի դռան շեմին, կամ սենյակի ներսի անկյունում: Հեռու մնացեք շենքի դրսի պատերից, նրանք առաջին հերթին են փլվում, պատուհաններից (փշրվող ապակիներից վիրավորվելու վտանգը), ծանր ու մեծածավալ առարկաներից՝ պահարաններից և այլն, որոնք կարող են շարժվել տեղից կամ շրջվել:

12. Եթե երկրաշարժի ժամանակ դուք գտնվում եք փողոցում, հեռացեք տներից և էլեկտրական լարերից դեպի անվտանգ, բաց տարածություն:

13. Ցնցումների ժամանակ փողոցում գտնվելիս մի փորձեք շենք մտնել որևէ մեկին օգնելու նպատակով (թեկուզ հարազատներին), դա շատ վտանգավոր է: Պետք է սպասել ցնցումների ավարտին և միաժամանակ շենքում մնացածների փրկության պլան մշակել:

14. Եթե արթնացել եք ստորգետնյա ցնցումներից, ոչ մի դեպքում չմիացնեք էլեկտրական լույսը (դա կարող է հանգեցնել կարճ միացման), մի օգտագործեք նաև լուցկի ու գազայրիչ (գազատարը կարող է վնասված լինել), օգտվեք միայն գրպանի լապտերից, հագնվելու վրա ժամանակ մի վատնեք, այլ ձեզ հետ արագ վերցնելով ամենաանհրաժեշտը՝ գործեք այս բաժնի նախորդ կետերում նշված կանոններին համաձայն:

3. Ի՞ՆՉ ԱՆԵԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ

15. Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ փլատակներում գտնվող մարդիկ կարող են յոթ օր ապրել, եթե նույնիսկ ամբողջովին գրկված լինեն ջրից ու սննդից: Դրա համար ամբողջ ուժերը պետք է գործի դնել՝ այդ յոթ օրում որոնել և փրկել մարդկանց:

16. Փլատակների մաքրումը, մարդկանց դուրս բերելը այնտեղից և նրանց օգնություն ցուցաբերելը պետք է կատարվի հատուկ նախապատրաստված փրկարարների ղեկավարությամբ: Փլատակների ոչ հմուտ մաքրումը կարող է հանգեցնել հետագա փլուզումների, իսկ ոչ հմուտ օգնությունը ցուցաբերելու հետևանքով մարդիկ կարող են զոհվել այսպես կոչված «ճզմման սինդրոմից», ոչ ճիշտ կատարված արհեստական շնչառությունից և այլն:

17. Եթե դուք գտնվում եք փլատակում, մի հուսահատվեք, հանգիստ և սթափ գնահատեք իրավիճակը, որովհետև չմտածված գործողությունները կարող են հանգեցնել շենքի բեկորների հետագա փլուզումների: Եթե հնարավորություն կա՝ տեղափոխվեք ավելի անվտանգ տեղ: Անհրաժեշտության դեպքում ցույց տվեք ձեզ առաջին օգնությունը, այսինքն կանգնեցրեք արյունահոսությունը, վիրակապ դրեք: Եթե ձեզ հետ միասին փլատակում են մնացել և ուրիշներ՝ հանգստացրեք նրանց և առաջին բուժօգնություն ցույց տվեք: Եթե նրանք երկար ժամանակ են մնացել ճզմված, սկզբում վերքից վերև լարան դրեք և հետո միայն ազատեք ճզմված տեղը: Աշխատեք կապ հաստատել (գոռացեք, հարվածեք հնչեղ առարկաներով) այն մարդկանց հետ, որոնք փլատակների տակ չեն մնացել և նրանց հետ՝ ովքեր գտնվում են հարևան փլատակներում: Նրանց տեղեկությունները կարող են օգնել փրկարարներին: Փլատակները մաքրելիս զգուշացեք փրկարարներին սպառնացող վտանգի մասին: Եթե առաջին մի քանի օրում ձեզ չգտնեն՝ սկսեք խնայել ուժերը, ավելորդ շարժումներ մի արեք: Եթե ձեր տրամադրության տակ կա սնունդ և հեղուկ (ջուր հյութեր, կոմպոտ), շատ խնայողաբար օգտագործեք, բաժանելով դրանք առնվազն 15 օրվա: Եթե ուտելիք չկա, խուճապի մի մատնվեք, առանց ուտելիքի մարդն ապրում է 15 օրից ավելի: Եթե ձեր տրամադրության տակ ոչ մի կաթիլ հեղուկ չկա՝ նույնպես խուճապի մի մատնվեք, մարդն առանց հեղուկի կարող է ապրել 7 օր: Սակայն քանի դեռ ուժասպառ չեք եղել, աշխատեք գտնել որևէ հեղուկ, եթե վնասվել է ջրատար խողովակը և այդ պատճառով թրջվել է ձեզ մոտ գտնվող հողը՝ պոկեք մի կտոր ձեր հագուստից և նրա միջոցով ծծեք ջուրը: Փոքրիկ քարեր, մետաղյա առարկաներ ծծելու դեպքում նույնպես կոտրվում է ծարավի զգացումը:

Հիշեք, ձեզ փնտրում են և ձեզ փրկելու համար կօգտագործեն ամեն մի հնարավորություն:

18. Եթե դուք մնացել եք փլատակում և հաստատ համոզված եք, որ ինքներդ կարող եք այնտեղից դուրս գալ՝ գործեք հետևյալ կանոններով, դուրս գալու սողանցք բացեք՝ զգուշանալով իրար վրա կուտակված մեծ բեկորներից, նրանք կարող են նստել: Սողանցքը անպայման ամրացրեք հենարաններով, որի համար կարող են ծառայել ամուր բեկորներ, փայտեր, մետաղյա առարկաներ: Կրկնակի ցնցումներից հետո ուշադիր հետևեք սողանցքի վիճակին: Փլատակները մաքրելիս նույնպես պետք է հետևել զգուշության այդ միջոցներին, եթե մասնագետ փրկարարների գալու հույս չկա:

19. Եթե ձեր շենքը չի տուժել, կամ քիչ է տուժել և դուք որոշել եք շարունակել այնտեղ ապրել (ցանկալի է մասնագետի եզրակացությունից հետո), ապա առաջին հերթին ստուգեք՝ վնասված չէ՞ արդյոք էլեկտրական գիծը և չկա՞ գազի արտահոսք: Մի դիպչեք էլեկտրական բաց հաղորդալարերին և բաց կրակով մի ստուգեք գազի արտահոսքը: Ստուգեք, արդյո՞ք չեն վնասվել վառարաններն ու ծխնելույզները, և կրակ մի վառեք մինչև չնորոգեք վնասվածքը: Մի օգտվեք զուգարանից մինչև չհամոզվեք, որ կոյուղին վնասված չէ: Ուշադիր զննեք բնակարանը, արդյո՞ք չեն թափվել վտանգավոր նյութերը (բենզին, քիմոեակտիվներ): Պահարանների և խորդանոցների դռները բացելիս զգույշ եղեք, որպեսզի ձեզ վրա ծանր առարկաներ չընկնեն:

20. Աղետի գոտում (հատկապես ամռանը) իրական է դառնում հսմահարակի սպառնալիքը: Այդ իսկ պատճառով շտապ պետք է կազմակերպել զոհվածների թաղումը: Պետք է հորել նաև կոտորված անասուններին: Անհրաժեշտ է նաև խստորեն պահպանել սանիտարական կանոնները այն պայմաններում, որտեղ մարդկանց մեծ մասը գտնվում է առանց տարրական հարմարությունների (զուգարանների կազմակերպում, սննդի և այլ մնացորդների այրում՝ պահպանելով հակահրդեհային անվտանգության կանոնները):

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ

ԶԻՆՎՈՐՆ ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ ՄԱՐԴ Է

Ես երեք դուստրերի մայր եմ և թող անհամեստ չհնչի՝ շարժմանը անդամագրված առաջին կին երդվյալ զինվորը: Հայաստանի համարյա բոլոր տաք կետերում կռվել եմ, մարտական գործողություններից մեկի ժամանակ կորցրել զինվոր ամուսնուս, որի աճյունի մոտ երդվել եմ մինչև խաղաղության վերջնական հաստատումը կրել համազգեստը: Կռվում եմ, պայքարում և այդ համարում եմ իմ կոչումը, իմ պարտքը:

Մոտ մեկ ու կես տարի է, ինչ Գորիսում եմ, Շուռնուխում: Էն գլխից ասեմ, որ ինձ և երեքիս թե յուրաքանչյուր զինվորի համար պատիվ է ունենալ Սուրեն Խաչատրյանի նման հրամանատար, մարդ—զինվոր—բաղաքացի, որի նկատմամբ տածում ենք խորին սեր, հարգանք, ինչու՝ չէ՝ նաև ակնածանք, որովհետև մարդն աշխատում է նվիրումով, ամեն կերպ ձգտում կուռ պահել մարտիկների շարքերը, բարձր պահել մարտական ոգին: Եվ այդ հաջողվում է:

Այն կարծիքին եմ, որ զինվորը զինվոր պիտի լինի՝ հոռու ամեն տեսակ կուսակցական խաղերից, հակադիր ու հակամետ ուժերի թիրախում հայանը չելուց, զուր տեղը ջուր ծեծելուց— փիլիսոփայելուց... Բայց անհրաժեշտության բերումով, ներքին ձայնիս ունկնդիր, կանացի ենթագիտակցության տագնապով կուզեի խոսք ասել:

Ինձ իրավունք չեմ վերապահում քաղաքական հարցերի դիտակ երևալ, բայց կուզեի մի բանի նկատառում հայտնել քաղաքում արձանագրված վերջին դեպքերի մասին, որտեղ «կենտրոնական» դմբի կարգավիճակ ստացավ մեր հրամանատարը, ընդհանուր, ոչ վայելուչ ձևով, նրա անվանը կցագրվեցին մականուններ:

Մի բան քաջ գիտեմ, զինվորականը եթե հասավ իշխանության գուռ, ուրեմն ինչ—որ բան այն չէ, ուրեմն ինչ—որ տեղ ոտնահարվել է նրա իրավունքը, ինչ—որ տեղ նրա նկատմամբ ցուցաբերվելիք ուշադրության հարցում թերացել են:

Սրանք պատահական մտքեր չեն, ես պատահական մարդ չեմ, ինձ էլ քաջ հայտնի են խոստումների և գործերի անհամաձայնության շատ—շատ դեպքեր:

Ուրեմն, հիրավի, պետք չէ շտապել գնահատական տալու հարցում, եկեք ուսումնասիրենք երևույթի բուն դրդապատճառը, հետևությունների գանք, ասել է՝ զինվորին էլ լիարժեք ու հոգատաշատ մարդ զգանք: Թե չէ շատ հեշտ է խժդժոց սկսելը, իրերը գլխիվայր շուռ տալը: Հարգենք միմյանց, հասկանանք ու գնահատենք մեկմեկու: Ե՛վ որպես զինվոր, և՛ որպես կին, և որպես հայուհի ես ձեզ՝ ամեն քիչ միասնության եմ կոչում, փոխ զիջումների: Հիշենք ցախավելի պատմության խորհուրդը՝ միասին անպարտելի են: Մեզ հաստատելու համար, եկե՛ք, դեթ մի՛ օր զիրքեր եկե՛ք:

Ուրեմն, միարան լինենք և շմոռանանք, որ զինվորը ամենից առաջ մարդ է:

ԿԱՐԻՆԵ ԱՂԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ՑԱՆՔ

Եղանակները տաքանալուց շրջանի գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և պետական տնտեսությունները սկսել են հացահատիկային, կերային կուլտուրաների ցանքը: Այդ գործում լավ օրինակ են ծառայում ստեփանամերձ Կոռնիձոր, Ներքին Խնձորեսկ գյուղերի երկրագործները, որոնք մի քանի օրվա ընթացքում 160 հեկտար տարածության վրա ցանել են հացահատիկ ու վարսակ:

Ցանքի կատարումը հաջողությամբ առաջ է տարվում նաև «Զանգեզուր» պետական և «Ավանգարդ» գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում: Շրջանի Տեղ, Խնձորեսկ, Վաղատուր, Կոռնիձոր, Քարահունջ և այլ գյուղերի գյուղացիական տնտեսություններն առաջին հեկտարների վրա կատարել են կարտոֆիլի ցանք:

Այնուամենայնիվ հարկ է նշել, որ թեև ապրիլ ամսվա առաջին տասնօրյակը ետևում է մնացել, ցանքի կատարմանն առայժմ ձեռնամուխ չեն եղել շրջանի մի շարք գյուղեր՝ Խնձաթափ, Քարաշենը, Խոզնավարը, Տաթևը, Խոտը և այլն: Մինչ դեռ ժամանակը չի սպասում, ցանքի կատարման լավագույն օրերն անցնում են:

ՍԵՓ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՕՏԵՂԾՎԱԾ Է ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ կառավարության մամլո կենտրոնից տեղեկացնում են, որ 1993 թվականի վարկային էմիսիայի մասին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1993 թ. մարտի 18-ի որոշմամբ ընդունված 209 մլրդ վարկային էմիսիայի արդյունավետ օգտագործման, ՀՀ կառավարության՝ դրան ուղղված միջոցառումների համակարգման և աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծվել է պետական հանձնաժողով՝ ՀՀ ֆինանսների նախարար Լևոն Բարխուդարյանի նախագահությամբ:

Հանձնարարվել է պետական հանձնաժողովին ՀՀ կառավարություն ներկայացնել 209 մլրդ վարկային էմիսիայի օգտագործման միջոցառումների ծրագիր:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՑԵԼ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմական ակնարկները ապացուցում են, որ շատ նորաձևություններ առաջացել են ծածկելու, թաքցնելու, կամ՝ հակառակը՝ ընդգծելու որոշ հանրահայտ, ազնվական մարդկանց թերությունները և առավելությունները:

Երկար շլեյֆները նորաձևության մեջ մտցրեցին Լյուդովիկոս 9-ի աղջիկները, որ շատ երկար ոտքեր ունեին:

Եվգենյա կայսրուհին (Մարիա դե Մոնտիխո) շատ անհամաչափ կազմվածք ուներ, ահա թե ինչու առաջացավ կրինոլինով (մետաղյա բարակ ձողիկներով) շրջազգեստը: Կարճ ժամանակում այն լայն տարածում գտավ Ֆրանսիայում և Եվրոպայի այլ երկրներում: Կրինոլինի հեղինակը ֆրանսիացի Օգյուստ Պերոնն էր:

Աննա Ավստրիացին՝ Լյուդովիկոս 13-ի կինը, որ շատ գեղեցիկ ձեռքեր ուներ, նորաձևության մեջ մտցրեց կարճաթև հագուստը: Մարկիզուհի Պոմպադուրը կարճահասակ էր և իր վարպետին պատվիրեց բարձրակրունկ կոշիկներ: Պալատականները նրան կրկնօրինակեցին, և նորաձև դարձան բարձրակրունկ կոշիկները:

Եվրոպայում թաշկինակը առաջին անգամ երևաց կայսրուհի Ժոզեֆինայի՝ Նապոլեոնի առաջին կնոջ ձեռքին. ծիծաղելիս նա թաշկինակով փակում էր բերանը, թաքցնելով ոչ այնքան գեղեցիկ, ատամները:

Ֆրանսիայի պրոֆեսոր Կոքանը հաստատում է, որ կարճ մազերը նորաձև դարձան Նինոն դե Լեսկոյի միրային անհաջողությունների պատճառով: Նինոնը շատ գեղեցիկ և սրամիտ կին էր: Հատկապես գեղեցիկ էին նրա մետաքսանման գանգուր մազերը: Մի անգամ իր երկրպագու կայսր Վիլարսկու հետ վիճելուց հետո Նինոնը մկրատով կտրեց իր մազերը: Շուտով նրա բոլոր ծանոթները հետևեցին «ա լյա Նինոն» սանրվածքին:

Երբ երկարատև սպասումներից հետո Մարիա Անտուանետան հղիացավ, պալատական կանայք հնարեցին «Օրհնված մայրություն» նորաձևությունը: Նրանք ըսկսեցին հագնել լայն շրջազգեստներ, որի տակ բար ձիկներ էին դնում և նմանվում հղի կնոջ: Բարձիկները տարբեր մեծության էին՝ կախված հղիության ամիսներից:

Լյուդովիկոս 14-րդ թագավորը սկսեց ճաղատանալ և ոչ մի բժիշկ, նույնիսկ ամենահայտնիները, չէին կարողանում նրան օգնել: Ճաղատը թաքցնելու համար թագավորը դիմեց արհեստական մազերին: Այդպես առաջացան կեղծամները:

Կոմս Անժուն հնարեց կոշիկներ մոտ կես մետր երկարությամբ քթով, այնպես, որ նրա ծայրը ստիպված շղթայով ամրացվում էր ծնկին: Դրանով նա ուզում էր թաքցնել իր տգեղ, խեղված ոտքերը:

Ներկայացրեց՝
Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆԸ

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԱՍՆՕՐՅԱԿ Է

Միայն ձմեռը չէ պատճառը, որ քաղաքի սանիտարական վիճակը մտահոգության տեղիք է տալիս: Անընդհատ կրկնող հրետակոծությունները նույնպես նըպաստել են մեր օրրանի անբարեկարգությանը: Բոլոր թաղամասերում թափված են ջարդված ապակիներ, շինարարական այլ նյութեր: Դրանք ոչ միայն ստվեր են գցում քաղաքի դիմագծի վըրա, այլև հղի են վտանգավոր հետևանքներով, քանզի գարուն է, օրերը տաք և երեխաները դուրս են եկել բակ: Վա՜յ այն երեխային, եթե հանկարծ վայր ընկնի: Այս և բազում այլ խընդիրներն էին պատճառը, որ օրերս քաղխորհրդի նիստերի դահլիճում կազմակերպվեց խորհրդակցություն, որին մասնակցում էին քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների, կոոպերատիվների ղեկավարներ ու ներկայացուցիչներ:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԻՍԵՑԻ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՏՆԿԵԼ ԵՎ ԽՆԱՄԵԼ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՏՆԿԻ

Խորհրդակցությունը բացեց գործկոմի նախագահ Ս. Հարությունյանը: Զեկուցումով հանդես եկավ փոխնախագահ Հ. Դինգչյանը: Նա մատնանշեց այն խնդիրները, որոնք պետք է իրականացվեն առաջիկայում հանուն մեր քաղաքի դիմագծի վերականգնման: Մասնավորապես որոշվեց առաջիկայում բոլոր թաղամասերը, փողոցները մաքրել աղբից: Սակայն դրանով չի ավարտվի գործը: Սանիտարական մաքրության տասնօրյակի շրջանակն ավելի ընդգրկուն կըլինի: Քաղաքում մեծածավալ աշխատանքներ կիրականացվեն նաև կանաչապատման ուղղությամբ: Անհրաժեշտ է քաղաքում լայնածավալ աշխատանք ձեռնարկել ծառատնկման ուղղությամբ: Յուրաքանչյուր գորիսեցի պետք է ամենաքիչը տնկի և խնամի 1 ծառ:

Այս գործում ներ են գրավվելու ոչ միայն հիմնարկ-ձեռնարկությունները, կոոպերատիվները, ուսումնական հաստատությունները, այլև Գորիսում գտնվող զինվորական բրիգադը:

ՍԵՖ. ԼՐԱՏՎՈՒԹ.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ø Մեծի տանը Կիլիկիո Հյուսիսային Ամերիկայի արևմտյան նահանգների թեմի ազգային առաջնորդարանն օրերս իր նպաստը բերեց քաղաքին օգնելու գործում: Առաջնորդարանը յուրաքանչյուրին 20 40 դոլլար նվիրաբերեց ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված, ինչպես նաև վիրավոր ազատամարտիկների, հրետակոծության հետևանքով զոհված մարդկանց ընտանիքներին, այդ նույն պատճառով առավել շատ տուժած քաղաքացիներին, երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, կույր հաշմանդամներին, խիստ կարիքավորներին: Ընդ որում, վերջիններիս՝ խիստ կարիքավորների հասցեները մատնանշել են քաղխորհրդի պատգամավորները:

Ø Ֆրանսիայի Վիեն քաղաքի հայկական համայնքի մի խումբ ներկայացուցիչներ 5030 դոլլարի օգնություն ցույց տվեցին քույր քաղաք Գորիսին: Որոշվել է նշված գումարով Գորիսից գնել գորգեր՝ քաղաքի արվեստագետների գործերից և Վիենում կազմակերպել ցուցահանդես-վաճառք: Դրանից ստացված եկամուտը կտրամադրվի քաղաքի բազմաբնույթ հարցերի լուծմանը:

Ø «Գթություն» բարեգործական ընկերության Գորիսի միության անդամներն օրերս եղան շրջհիվանդանոցի վիրաբուժական բաժնում և շոկոլադե սալիկներ տվեցին վիրավոր մարտիկներին: Զինվորների համար նրանք տարել էին նաև տաք ճաշեր: Որոշվել է վիրավորների համար հաճախակի տանել տաք ճաշեր:

Ø«Ազնավուրը՝ Հայաստանին», «Համագործակցություն—Հայաստան» կազմակերպությունների ուղարկած շոկոլադե սալիկները «Գթություն» բարեգործական ընկերության Գորիսի միությունը բաժանեց քաղաքի բոլոր դպրոցների տարրական դասարանների աշակերտներին, ինչպես նաև մանկապարտեզների սաներին ու այդ կոլեկտիվների անձնակազմերին:

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ԵՆՔ

Սահմանամերձ մեր գյուղը՝ Խընձորեսկը, բազմիցս ենթարկվել է հրթիռահրետակոծության: Գյուղում համարյա չկա մի տուն, մի ընտանիք, որին կպած չլինի գնդակոծության ալիքը: Իսկ վերջերս մեծ չափերի հասնող վնաս կրեցինք նաև մենք: Հրետակոծության պատճառով համարյա ավերվեցին մեր տները, փչացավ տարիների քրտինքով ստեղծած ողջ ապրուստը: Դարձանք անասնազուրկ:

Մենք աշխատում ենք կապի շրջհանգույցում: Կոլեկտիվի ղեկավար Լավրենտի Վարդանյանը գյուղի հրետակոծության լուրը լսելուն պես շտապեց Խնձորեսկ՝ օգնելու կապավորներիս: Ինչով հնարավոր էր, նա օգնեց մեզ՝ ավերված տան մի անկյունում պատսպարվելու համար: Բացի դրանից նա 2 կապավորներիս հանձնեց 20 հազարական ռուբլի:

Ի խորոց սրտի շնորհակալություն ձեզ, Լավրենտի Վարդանյան:

ՀԱՄԼԵՏ ԹԵԼՈՒՆՑ, ԱՇՈՏ ՆԱՄՈՒՆՑ
կապավորներ, գյուղ Խնձորեսկ

Շնորհակալություն

Աշխատանքի բերումով շարունակ առնչվում եմ կապի շրջանային հանգույցի 07 ծառայության աշխատակիցների հետ, որոնք միշտ էլ աչքի են ընկնում իրենց սիրալիրությամբ, ստացված պատվերները ժամանակին կատարելու պատրաստակամությամբ:

Շնորհակալություն ձեզ՝ լավագույն սպասարկման, բնակչության պատվերների օրինակելի կատարման համար:

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ
Գորիսի բանտի հատուկ մասի պետ

ԿՈՐԵԼ Է

Ներքին Խնձորեսկի գյուղական խորհրդի կլոր կնիքը:

Համարել անվավեր:

Զանգեզուրի տարածքային վարչությունը ցավակցում է վերջին օրերին մարտի ժամանակ զոհված բոլոր ազատամարտիկների հարազատներին, նրանց ցանկանում համբերություն:

Զանգեզուրի տարածքային ՆԳ վարչության Գորիսի ՆԳ բաժինը ցավակցում է աշխատակից Արմեն Ասրյանին, նրա զինվոր եղբոր՝

ԱՐԱՅԻԿ ԱՍՐՅԱՆԻ

զոհվելու կապակցությամբ:

Զանգեզուրի տարածքային ՆԳ վարչության Գորիսի ՆԳ բաժինը խորապես սգում է աշխատակից Անդրանիկ Խաչատրյանի զինվոր որդու՝ ԽԱՉԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ մահը և ցավակցում բոլոր հարազատներին:

Խմբագիր՝ Ս. Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մեր ՀԱՍՑԵՆ՝ 377800, Հայաստանի Հանրապետություն, ք. Գորիս, Նարեկացի 11 [illegible] Ս. Ս. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ

ՀԵՌԱԽՈՍՆԵՐ. Խմբագիր 2—23—48, խմբագրի տեղակալ և հասարակական —քաղաքական կյանք բաժին՝ 2—11—24, տնտեսության, նամակների բաժիններ՝ 2—11—22, գյուղական կյանք, մշակույթի, սոցիալական քաղաքականության բաժիններ՝ 2—36—84, հաշվապահ՝ 2—11—24:

Հավաքվել և էջադրվել է [illegible] Գորիսի տպարան: ՀՀ կառավարության [illegible] 1, 2— 43—69, 2—19—76, 2—14—72:

⊗ Մեկ պայմանական մամուլ ⊗ Տըպաքանակ՝ 2236 ⊗ Դասիչ՝ 49185 ⊗ Վկայագիր՝ 168 ⊗ Բարձր տպագրություն: Պատվեր՝ 16

Թերթի հիմնադիր՝ «Զանգեզուրի» խմբագրության աշխատավորական կոլեկտիվ